Տվյալ դեպքում Դատարան ներկայացված՝ «Պրոդ ինվեստ» ՍՊԸ-ի և «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի միջև 05.11.2024 թվականին կնքված «Իրավաբանական ծառայությունների մատուցման» պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրով Կատարողը Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցում է հետևյալ իրավաբանական ծառայությունները՝ ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՀԱԿ-ՀԲՄԾՁԲ-25 08 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Պրոդ ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու որոշման դեմ՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան հայցադիմումի ներկայացում, նույն քաղաքացիական գործի շրջանակներում՝ www.cabinet.armlex.am համակարգում փաստաթղթերի, ապացույցների, հայցադիմումի պատասխանի և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ դիրքորոշման ներկայացում, մուտքագրում և բեռնում, դատական ներկայացուցչության ապահովում: Նույն պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի 1.1. կետով նախատեսված ծառայությունների մատուցման համար Պատվիրատուն պարտավորվում է վճարել 600.000 ՀՀ դրամ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ ՀԱսմիկ Ալեքսանդրի Ենգոյանը աշխատում է «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: Թիվ 000010 վճարման հանձնարարգրի համաձայն՝ «Պրոդ ինվեստ» ՍՊԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ին փոխանցել է 600.000 ՀՀ դրամ՝ որպես իրավաբանական ծառայության դիմաց գումար:

Հիմք ընդունելով վերը հայտնած իրավական դիրքորոշումները, այն հանգամանքը, որ սույն գործով անցկացվել է մեկ դատական նիստ, գործը քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով, Դատարանը գտնում է, որ սույն գործով փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է սահմանել 80.000 ՀՀ դրամը և բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-րդ, 362-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով ՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի, երրորդ անձ «Եղվարդի Նեկտար» ՍՊԸ-ի՝ թիվ ԱՀԱԿ-ՀԲՄՔՁԲ-25/08 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 01.11.2024 թվականի նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը և արձանագրության 4.1 կետով «Եղվարդի Նեկտար» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել.

1.1. Անվավեր ճանաչել ԱՀԱԿ-ՀԲՄՔՁԲ-25/08 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 01.11.2024 թվականի նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին և 4.1 կետով «Եղվարդի Նեկտար» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումները:

2. «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. «Ավան հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ի բռնագանձել 80.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Կիմա Արզումանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am